ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի փետրվարի 25-ի N1-Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 3-րդ ենթակետով և ներկայացնելով Համալսարանի <<Իսպաներեն լեզու և գրականություն>> մասնագիտության առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի գործող ուսումնական պլանում փոփոխություն կատարելու մասին հարցը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

«Իսպաներեն լեզու և գրականություն» մասնագիտության առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի գործող ուսումնական պլանի առարկայական ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. *3*-րդ և 4-րդ կուրսի բոլոր մանկավարժական պրակտիկաները համարել ուսումնական,
2. 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմատիկան սահմանել լեզվաբանական մասնագիտության տիրույթում,
3. 3-րդ կուրսի 1-ին կիսամյակի «Իսպաներենի դասավանդման մեթոդիկա» առարկան փոխարինել «Տեքստի լեզվամշակութային վերլուծություն» առարկայով,
4. 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի «Ընտրովի դասընթաց* 1 ՄՀ-ից» առարկան փոխարինել «Իսպանախոս երկրների լեզուն և մշակույթը» առարկայով,
5. 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակի «Իսպաներենի դասավանդման մեթոդիկա» առարկան փոխարինել «Իսպանախոս երկրների ԶԼՄ-ների լեզուն» առարկայով:

Ժամաքանակի և կրեդիտների բաշխվածությունը թողնել անփոփոխ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ